Տեղեկատու թիվ 9 (սեպտեմբեր 2021թ.)
Newsletter N9

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ
Հայ դատի Արցախի գրասենյակի հիմնադրություն

The Office of the Armenian National Committee will be established in Artsakh

The Office of the Armenian National Committee will be established in Artsakh by the decision of the ARF Bureau, taking into account the humanitarian, security and moral-psychological challenges caused by the recent war, the Central Office of the Armenian National Committee said in a statement.
The establishment of the ANC Office in Artsakh is a clear political message that the protection of rights of the people of Artsakh, the international recognition of the Republic of Artsakh, the elimination of the consequences of war and the recovery of Artsakh remain the key issues and political priorities of the activity of the ANC global network.
On September 2 the ANC Central Office is expected to hold an official reception in Stepanakert on the occasion of the establishment of their office in Artsakh.

Text Link

Արցախում պաշտոնապես ազդարարվեց ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի բացումը

ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական գրասենյակի կազմակերպմամբ՝ Ստեփանակերտում անցկացվեց ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի բացման պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում ներկայացվեցին Ղարաբաղյան հիմնախնդրի ներկա

հանգրվանում Հայ դատի համաշխարհային ցանցի քաղաքական առաջնահերթություններն ու Հայ դատի Արցախի գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները:
Պաշտոնական ընդունելությանը մասնակցում էին Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը, արտգործնախարար Դավիթ Բաբայանը, Արցախի խորհրդարանի բոլոր խմբակցությունների և ՀՀ խորհրդարանի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Text Link

Օտարերկրյա ավելի քան քսան բարձրաստիճան քաղաքական գործիչներ շնորհավորել են Արցախի Հանրապետության օրվա 30-րդ հոբելյանը

Արցախի Հանրապետության օրվա 30-րդ հոբելյանի առթիվ Արցախի ժողովրդին շնորհավորական ուղերձներ և քաջալերանքի խոսքեր են հղել Արցախի միջազգային բարեկամների “Pro Artsakh” ցանցի անդամ-օտարերկրյա մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ աշխարհի տասը երկրներից:
Կից ներկայացվում է նրանց անունները:

Text Link

ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի աշխատանքների համար ստացվել է առաջին նվիրատվությունը

Հայտնում ենք, որ ստացել ենք հասցեական նվիրատվություն՝ ՀՅԴ Հայ դատի Արցախի նորահաստատ գրասենյակի գործունեությանն աջակցելու համար։
ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհուրդն իր երախտագիտությունն է հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող “Sosé & Allen’s Legacy” հիմնադրամին՝ Հայ դատի Արցախի գրասենյակի աշխատանքների առաջին մեկ տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նվիրաբերության համար։ Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Հիմնադրամի կողմից նորահաստատ գրասենյակում, առաջիկա հինգ տարիների ընթացքում, երիտասարդների վարժողական ծրագրի ֆինասական ծախսերը հոգալու համար։

Մեր ժողովրդի համար դժվարին այս ժամանակահատվածում Արցախն առավել քան երբևե ունի աշխարհասփյուռ հայության, համահայկական կազմակերպությունների, մեր կարող հայրենակիցների կարիքը։
Մեր պայքարի ներկա հանգրվանում ազգային-պետական նպատակներից նահանջը լավագույն նվերը կլինի իր հանցագործ նպատակներին ամբողջապես չհասած և Ղարաբաղյան հիմնախնդիրը նույնիսկ պատերազմական ճանապարհով չլուծած թշնամուն։
Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիակատար իրացումը, 1988 թ. Ազգային ազատագրական շարժման նպատակներն այլընտրանք չունեն։ Այս հանձնառության ճանապարհին Հայ դատի համաշխարհային ցանցը, իր նվիրյալ բարեկամների հետ, որևէ ջանք ու միջոց չի խնայելու։

Text Link

Պատերազմը ինչ-որ իմաստով ավելի շեշտադրեց Արցախի անկախության ճանաչման անհրաժեշտությունը

Արցախի հանրային հեռուստատեսության հարցազրույցը ՀՅԴ Բյուրոյի անդամ, ՀՅԴ Հայ Դատի կենտրոնական գրասենյակի պատասանատու Կիրո Մանոյանի հետ։ Հարցազրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի բացման կարեւորությանը։ Շոշափվել են նաեւ Արցախին առնչվող մի շարք այլ հարցեր։

Մանրամասները՝ տեսանյութում

Text Link

Հարգել և իրացնել Արցախի՝ ի վերուստ սահմանված անառարկելի իրավունքները

ՀՅԴ հանրային կապերի գրասենյակը Մինսկի խմբի համանախագահների սպասվող այցի շուրջ զրուցել է ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի պատասխանատու Գեորգի Պետրոսյանի հետ։

Text Link

ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհրդի նախագահն այսօր ընդունել է Բարոնուհի Քերոլայն Քոքսին

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ, Հայ դատի Կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանն այսօր ընդունել է Միացյալ Թագավորության Լորդերի պալատի անդամ, մեր ժողովրդի մեծ բարեկամ, Բարոնուհի Քերոլայն Քոքսի գլխավորած պատվիրակությանը:
Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՅԴ Բյուրոյի անդամ, Հայ դատի Կենտրոնական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արթուր Խաչատրյանը, Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանը:
Ողջունելով հյուրերին՝ Հակոբ Տեր-Խաչատուրյանը նախ շնորհակալություն է հայտնել Բարոնուհի Քոքսին՝ տասնամյակներ շարունակ Հայաստանին, Արցախին ու հայ ժողովրդին ցուցաբերած վիթխարի օժանդակության համար: Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ՝ մասնավորապես տարածաշրջանային քաղաքական գործընթացները և այդ համատեքստում Թուրքիայի և Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները: Հատուկ անդրադարձ է կատարվել Թուրքիայի կողմից Հայաստանի վրա գործադրվող ճնշումներին, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագծման և սահմանազատման գործընթացի անընդունելիությանը: Փորձ է արվում այդ գործընթացներն իրականացնել միջազգայնորեն ընդունված կարգավորումները շրջանցելով, Հայաստանի տարածքային ամբողջականության խախտումներով և ուղղակի ռազմական սպառնալիքով:
Հատուկ ուշադրության է արժանացել Արցախյան հիմնահարցի ներկա հանգրվանը, քննարկվել են Արցախի Հանրապետությանը, ժամանակավորապես տեղահանված անձանց և ռազմագերիների ազատության խնդրին վերաբերող հարցեր: Այս ուղղություններով նախանշվել որոշ ծրագրեր:

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

U.S. Representatives File Eight Amendments to Hold Azerbaijan and Turkey Accountable

U.S. Representatives are leading the charge to block U.S. arms and aid to Azerbaijan, as part of a series of eight pro-Artsakh/Armenia amendments to the Fiscal Year 2022 National Defense Authorization Act (H.R.4350) filed this week, reported the Armenian National Committee of America (ANCA). Other amendments demand Azerbaijan's immediate release of Armenian POWs; call for an investigation of the use of U.S. technology in Turkish drones used against Artsakh and Armenia; explore ways to expand U.S. aid to Artsakh; and, designate Turkey's "Grey Wolves" as a terrorist group.
The ANCA is leading a nationwide grassroots effort – anca.org/ndaa – to secure cosponsors for each of the amendments, which are set to be considered by the House Rules Committee as early as Monday, September 20th. The full U.S. House will have the opportunity to vote on each of the amendments ruled "in order" during consideration of H.R.4350. Amendments with strong, bipartisan backing are generally considered more favorably by Rules Committee members.

Text Link

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն Ադրբեջանից պահանջում է անհապաղ ազատ արձակել հայ ռազմագերիներին և քննել Ադրբեջանի կողմից պատերազմական հանցագործությունների հարցը

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի քաղաքական առաջնահերթությունների մեծ մասը վերջերս արտացոլվել էին «ԱՄՆ ազգային պաշտպանական արտոնությունների ակտի» քննարկումների ընթացքում՝ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի կողմից առաջադրված թվով ութ օրենսդրական փոփոխությունների միջոցով։ Առաջադրված փոփոխությունները ենթադրում են Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական և ֆինանսական օժանդակության դադարեցում, ԱՄՆ կառավարության համապատասխան մարմիններից տեղեկատվության պահանջում, թե արդյո՞ք ԱՄՆ ռազմական օժանդակությունից օգտվող պետություններն իրականացրել են մարդու իրավունքների կոպիտ խախտումներ, Արցախում ԱՄՆ հումանիտար և զարգացման աջակցության բոլոր ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, բոլոր հայ ռազմագերիների անհապաղ վերադարձ, թուրքական արմատական «Գորշ գայլեր» կազմակերպության գործունեության արգելք, զեկույց պաշտպանության քարտուղարից՝ թուրքական անօդաչուներում կիրառված ամերիկյան տեխնոլոգիաների վերաբերյալ՝ այն հարցադրմամբ, թե խաղաղ բնակչության դեմ ամերիկյան ռազմական արտադրանքի օգտագործումը արդյո՞ք չի խախտում ԱՄՆ օրենսդրությունը։

Text Link

U.S. House Demands Azerbaijani War Crimes Investigation; Azerbaijan's Release of Armenian POWs

The U.S. House staked out a powerful stand today against Azerbaijan and Turkey's 2020 attack on Artsakh (Nagorno Karabakh) and Armenia, overwhelmingly passing five Armenian National Committee of America (ANCA)-backed amendments demanding Baku's release of Armenian prisoners of war (POWs), calling for investigations into Azerbaijani war crimes, supporting U.S. aid to Artsakh, and urging Turkey's Grey Wolves be designated a foreign terrorist organization.

The measures were adopted by voice vote on Wednesday and Thursday of this week, as part of larger groupings, or blocs, of amendments to the National Defense Authorization Act (NDAA – H.R.4350). The U.S. House is expected to pass the underlying NDAA measure on Thursday on a largely party-line vote.

"The U.S. House of Representatives – over intense Turkish and Azerbaijani lobbying, but without any vocal legislative opposition – voted overwhelmingly today to hold Ankara and Baku accountable for their attacks on Artsakh last fall and ongoing aggression against Armenia," said ANCA Executive Director Aram Hamparian. "We join with our coalition partners and countless community activists to thank the authors of these ANCA-backed amendments – and all those who supported their passage – and are already at work ensuring that these principled and powerful stands are enacted into U.S. law and translated into American policy."

Text Link

Գանատայի Հայ Դատի Յանձնախումբը Օթթաուայէն կը պահանջէ Երեւանի մէջ դեսպանատուն հիմնել

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը 21 Սեպտեմբեր 2021-ին, հրապարակեց հաղորդագրութիւն մը, ընդ որում, Գանատայի կառավարութենէն կը պահանջէ Երեւանի մէջ դեսպանատուն հիմնել։
Հաղորդագրութեան մէջ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի համանախագահ Հրակ Տարաքճեանը կը նշէ. «խորապէս մտահոգ ենք հայ ժողովուրդի առջև ծառացած անվտանգութեան խնդիրներով և Թուրք-ատրպէյճանական յարձակողապաշտ քաղաքականութեամբ ու վարքով»։
Հաղորդագրութեան մէջ կը յիշուի նաեւ, որ տարիներու վրայ երկարող ու փակուղի մտած բանակցութիւնները, թուրք-ատրպէյճանական ռազմատենչ գործողութիւններն ու միջազգային հանրութեան անտարբերութիւնը պատճառ հանդիսացան, որ անցեալ տարի, Ատրպէյճանը անգամ մը եւս գործադրէ իր յարձակողապաշտ վարքագիծը Հայաստանի և Արցախի դէմ, որուն հետեւանքով ստորագրուեցաւ հրադադարի հռչակագիր մը՝ Հայաստանին ու Արցախին կանգնեցնելով դիւանագիտական ու ապահովական նոր մարտահրաւէրներու դիմաց։

Text Link

On Armenian Independence Day, the ANCC Presses Ottawa to Establish an Embassy in Yerevan

The Armenian National Committee of Canada (ANCC) is joining Armenians in Canada and around the world in celebrating the 30th anniversary of the independence of the Republic of Armenia.
On September 21, 1991 – after seventy years of Soviet dominance, Armenia regained its independence and rebuilt a modern-day republic, against a backdrop of enormous socio-economic and security challenges.
“While we are proud of the great strides achieved by the Republic of Armenia over the course of the last three decades, we remain deeply concerned by the ongoing security challenges faced by the Armenian people and the never-ending aggression of Turkey and Azerbaijan,” said Hrag Tarakdjian, Co-President of the ANCC.
Years of stalled negotiations, unchecked Turkish-Azerbaijani warmongering and harrowing indifference from the international community resulted in last year’s Turkish-backed Azerbaijani aggression against the Republics of Armenia and Artsakh, ending in an egregious ceasefire announcement that left Armenia and Artsakh facing renewed diplomatic and security challenges.

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Australian Political Leaders call Azerbaijani Aggression in Armenian Independence Day Video Massages

High-profile group of Federal Australian parliamentarians have joined the Armenian-Australian community in celebrating the 30th Anniversary of the

Republic of Armenia, with many also addressing the ongoing threats and invasion faced by the country, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).

Text Link

Ավստրալիական պետական SBS հեռուստալիքը, պաշտոնապես ներողություն է խնդրել երկրի հայ համայնքից

Ավստրալիական պետական SBS հեռուստալիքը, պաշտոնապես ներողություն է խնդրել երկրի հայ համայնքից՝ Արցախի վերաբերյալ թյուր տեղեկատվությունների հանրայնացման համար: Մասնավորապես շաբաթներ առաջ լրատվական գործակալությունը հրապարակում էր արել, որոնցում Արցախի ականապատ տարածքների վերաբերյալ ներկայացվել էր սխալ տեղեկատվություն և մեղադրանքներ էին ուղղվել հայկական կողմի հասցեին: ՀՅԴ Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբը, ավստրալահայ համայնքի անունից բողոքի ալիք բարձրացրեց, ինչից հետո գործակալության պաշտոնյաները ներողություն խնդրեցին հայ համայնքից:

Text Link

Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբ

ՀՅԴ Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբը սեպտեմբերի 26-ին բողոքի ցույց կազմակերպեց Փարիզում Ադրբեջանի դեսպանության առջև: Ցուցարարները նախ դատապարտեցին ադրբեջանական ագրեսիան և պահանջեցին հայ ռազմագերիների վերադարձ, ապա Արցախին օժանդակություն ապահովելու վերաբերյալ պահանջներ ներկայացրեցին Ֆրանսիայի կառավարությանը: Ցուցարարները դժգոհում էին Հայաստանին ու Արցախին տրամադրվող անբավարար օժանդակության առթիվ:

Text Link

Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

Քաղաքական հանդիպումներ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահի մասնակցությամբ

Սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում աշխատանքային այցով Կիպրոսում էր գտնվում ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի

հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը: Վերջինս, ուղեկցությամբ ՀՅԴ Հայ դատի Կիպրոսի հանձնախմբի նախագահ Հակոբ Կազանչյանի, քաղաքական հանդիպումներ է ունեցել Կիպրոսի քաղաքական շրջանակների հետ: Մասնավորապես՝ «ՏԻԿՕ» կուսակցության նախագահ Նիկոլաս Պապատոպուլոսի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են Արցախի հետպատերազմական իրավիճակը, Հայաստանի քաղաքական իրավիճակը, կիպրական հարցը, ինչպես նաև ՀՅԴ Հայ Դատի Կիպրոսի հանձնախմբի և «ՏԻԿՕ» կուսակցության միջև գործակցության հնարավորությունները:

Հանդիպումներ են կայացել նաև «Ժողովրդավարական ուժերի համախմբում» (DEPA) կուսակցության ղեկավար, Եվրոպական Խորհրդարանի նախկին պատգամավոր և Կիպրոսում Արցախի հետ բարեկամության խմբի անդամ Անտիգոնի Պապադապոլուի հետ: Զրուցակիցները, Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող ստեղծված իրավիճակը քննարկելուց հետո ջերմությամբ են հիշել իրենց համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում և Եվրոպական Խորհրդանում:

Գասպար Կարապետյանը նաև հանդիպումներ է ունեցել ԷՏԷՔ կուսակցութեան փոխնախագահ Կոստաս Էֆսդադիուի և Ստրովոլոսի քաղաքապետ՝ Անդրեաս Պապախարալմպուսի հետ, որոնք հյուրընկալվել էին ՀՄԸՄ-ՀԵՄ ակումբում: Հանդիպումների շարքը եզրափակվել է Կիպրոսի Բնապահապանների կուսակցության նախագահ Խարալամբոս Թեոպեմդուի, կուսակցության նախկին նախագահ Եորղոս Պերտիկիսի, կենտրոնական վարչության անդամ և Ստրովոլոսի ավագանու անդամ Բանայոդիս Մանոլինի հետ հանդիպմամբ:

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբի շնորհաւորական նամակը Արցախի Հայ դատի գրասենեակի բացման առթիւ

Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբը, կ'ողջունէ Հ.Յ.Դ. Արցախի Հայ դատի գրասենեակի բացման կարեւոր նախաձեռնութիւնը, մաղթելով յաջողութիւն իր ազգանուէր առաքելութեան մէջ:

Արցախի Հանրապետութեան յարատեւումը ու հայութեան արդար իրաւունքներու պահանջատիրութիւնը, կը հանդիսանան Հայ դատի աշխատանքներու կիզակէտը, որոնք անմիջականօրէն շաղկապուած են Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ժողովուրդի ապագային ու յարատեւութեան հետ:

Այս իսկ ըմբռնումով, Հ.Յ.Դ. Հայ դատի գրասենեակի բացումը Արցախի մէջ, կարեւոր ներդրում պիտի բերէ, Հայրենիքի եւ - Հայ ժողովուրդի իրաւունքներու եւ շահերու վերահսկման աշխատանքին:

Արցախի Անկախութեան նուիրական թուականէն 30 տարիներ ետք, խիստ անհրաժեշտութիւն մըն էր Հայ դատի գրասենեակի մը ներկայութիւնը Արցախի Հանրապետութեան տարածքին, որ այլեւս իրականութիւն է: Մեր խոր հաւատքն է որ ան պիտի հանդիսանայ այն յենակէտը, ուրկէ Հայ դատի գրասենեակներու եւ յանձնախումբերու համաշխարհային ցանցը պիտի սնուցանուի ու ընդարձակէ իր գործունէութեան դաշտը:

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինի Պատուիրակութիւնը Այցելեց Լիբանանի Մէջ Կիպրոսի

Դեսպանին

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Վահրամ Եմմիեան, Քրիսթին Արզումանեան, Ճօ Զուլիքեան եւ Ցոլեր Թալաթինեան, չորեքշաբթի, 22 սեպտեմբերին այցելեց Լիբանանի մէջ Կիպրոսի Հանրապետութեան դեսպանատուն, ուր հանդիպում ունեցաւ դեսպան Փանայոթիս Քիրիաքուի հետ:
Աւելի քան մէկուկէս ժամ բացառիկ փոխադարձ հասկացողութեան մթնոլորտի մէջ ընթացած հանդիպումին ընթացքին արծարծուեցան հասարակաց հետաքրքրութիւն եղող հարցեր եւ զարգացումներ:
Լիբանանի Հայ դատի մարմինը դեսպանին ներկայացուց արցախեան Բ. պատերազմի զարգացումներն ու հետեւանքները՝ նշելով, որ հայկական ու կիպրական կողմերը նոյնանման խնդիրներ կը դիմագրաւեն եւ նոյն յարձակողապաշտ հակառակորդները ունին:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Ներկայացուցիչներու Տան Որոշումը Ողջունող Նամակ Մը Յղեց Լիբանանի Մէջ Միացեալ Նահանգներու Դեսպանին

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը չորեքշաբթի, 24 սեպտեմբերին Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիային յղեց նամակ մը, որուն մէջ ողջունեց Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան կողմէ քոնկրեսականներ Թոնի Քարտենասի, Էտըմ Շիֆի եւ Փրետ Շըրմընի ներկայացուցած ուղղումի որդեգրումը, որ Ազրպէյճանէն կը պահանջէ անյապաղ ազատ արձակել հայ ռազմագերիները, որոնք մարդկային իրաւանց միջազգային հռչակագիրներու խախտումով՝ ապօրինաբար բանտարկուած կը պահուին եւ չարչարանքներու կ՛ենթարկուին:
Լիբանանի Հայ դատի մարմինը նշեց, որ որոշումով կոչ կ՛ուղղուի՝ մանրամասն հետաքննութեան ենթարկելու Ազրպէյճանի զինուորական յանցագործութիւնները, ինչպէս նաեւ 2020-ի աշնան յարձակումի ընթացքին Թուրքիոյ եւ Ազրպէյճանի կողմէ օտար վարձկաններու օգտագործումը, «որուն վերաբերեալ բազմաթիւ տեսագրութիւններ գոյութիւն ունին»:
Որոշումը նաեւ կը պահանջէ հետաքննել թրքական անօդաչու թռչող սարքերու մէջ ամերիկեան արհեստագիտութեան օգտագործումը, ինչ որ կ՛ոտնահարէ արտածման ամերիկեան արտօնագիրները:

Text Link

Հայ դատի Նիդերլանդների հանձնախումբ

Հանդիպում Նիդերլանդների արտգործնախարության պաշտոնյայի հետ

Արցախյան երկրորդ պատերազմի տարելիցի կապակցությամբ Նիդերլանդների ՀՅԴ Հայ Դատի հանձնախումբը այսօր երկրի արտգործնախարարությունում հանրագիր հանձնեց

Արևելյան Եվրոպայի բաժնի պատասխանատուներ՝ Շառլոթե վան Բաքին և Իրենե Կրախտին։
Հայ Դատի հանձնախումբը ներկայացնում էին՝ Մասիս Աբրահամյանը և Նուբար Վարդանյանը։
Բովանդակային զրույցի ընթացքում քննարկվեցին Արցախում այսօր տիրող իրավիճակը, Նիդերլանդների խորհրդարանի հայանպաստ որոշումները և կառավարության արտաքին քաղաքականությունը։



Երկուստեք բարձր գնահատվեց նման հանդիպումների կարևորությունը՝ տեղեկությունների փոխանցման և հարաբերությունների զարգացման համար։ Տիկին Բաքը վստահեցրեց, որ Նիդերլանդները շարունակելու են հնարավոր բոլոր միջոցները ներդնել Արցախի հիմնահարցի լուծման համար, ինչպես նաև Հայաստանի և Արցախի զարգացմանը հարատև աջակցություն ցուցաբերելու գործում։

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info